ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2007թ. ընթացքում ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները կիրականացվեն հետևյալ ուղղություններով.

1. Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության իրավական դաշտի կատարելագործում, ինչպես նաև վճարային համակարգերի գործունեության ընդհանուր սկզբունքների սահմանում:
2. Վճարահաշվարկային համակարգերի հսկողության աշխատանքների իրականացում:
3. ՀՀ-ում անկանխիկ վճարումների զարգացմանը աջակցում:

2007 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակելու է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային բնագավառի կանոնակարգման աշխատանքները: Մասնավորապես, 2004 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա կկատարելագործվի իրավական դաշտը, ինչը թույլ կտա ՀՀ-ում կանոնակարգել վճարահաշվարկային գործառնությունները, վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը և հսկողությունը: Բացի այդ, ՀՀ կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում կլինեն նոր տեխնոլոգիաների հիման վրա ներդրվող և գործող վճարային գործիքներ/ծառայությունները:

ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է 2007թվականին շարունակել պետական և կորպորատիվ արժեթղթերով շրջանառությունը և նվազագույն ռիսկեր պարունակող հաշվարկային և վճարային ընթացակարգերի մշակումը:

Ուշադրություն դարձնելով ֆինանսական համակարգերում ռիսկերի բացահայտման և դրանց կառավարման քաղաքականությանը և հաշվի առնելով վճարահաշվարկային համակարգի գործունեության առաջադիմական նշանակությունը և զարգացման միտումները, ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականին կշարունակի ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգի հսկողության հայեցակարգի մշակման և գործընթացների կարգավորման աշխատանքները:

ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ կառավարության հետ համատեղ, կշարունակի միջոցառումներ իրականացնել՝ անկանխիկ շրջանառության խրախուսման և մանր վճարումների շուկայի զարգացման նպատակով: Միաժամանակ, ՀՀ բանկային համակարգի, պետական մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, աշխատանքներ կկատարվեն անկանխիկ եղանակով վճարումների իրականացմանը խոչընդոտող գործոնների բացահայտման և, հնարավորության դեպքում, դրանց նվազեցման և/կամ լուծման ուղղությամբ: